ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 48-Լ

«09» 06 2025 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Արարատի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Արարատի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքը նույն դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու, ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանն աջակցող բաժնի ավագ մասնագետի 1 հաստիքը ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությանն աջակցող բաժնի ավագ մասնագետի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 21-րդ գլխի 80-րդ կետի «Դատախազության դատախազ 11» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 10» բառերով, «Ընդամենը՝ 19» բառերը՝ «Ընդամենը՝ 18» բառերով, իսկ 23-րդ գլխի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 109» բառերը՝ «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 108» բառերով,

2) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 25-րդ գլխի 95-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 6» բառերով, «Ընդամենը՝ 12» բառերը՝ «Ընդամենը՝ 13» բառերով, իսկ 33-րդ գլխի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 113» բառերը՝ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 114» բառերով,

3) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 109» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում՝ 108» բառերով, իսկ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 113» բառերը՝ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 114» բառերով,

4) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 19-րդ գլխի 58-րդ կետի «Բաժնի ավագ մասնագետ 1» բառերը փոխարինել «Բաժնի ավագ մասնագետ 2» բառերով, իսկ «Ընդամենը՝ 2» բառերը՝ «Ընդամենը՝ 3» բառերով,

5) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 19-րդ գլխի 60-րդ կետի «Բաժնի ավագ մասնագետ 3» բառերը փոխարինել «Բաժնի ավագ մասնագետ 2» բառերով, իսկ «Ընդամենը՝ 4» բառերը՝ «Ընդամենը՝ 3» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության

վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**